Համաձայնագիր-1
02.10.2018թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/011 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան « 29 » Նոյեմբեր 2018թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսխական փորձաքննություն» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Գ. Արշակյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 02.10.2018թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/011 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.13-րդ կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների կազմակերպման կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Պայմանագրի գնի 100 տոկոսը՝ 816,000 (ութ հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, պայմանով, որ Կապալառուն Պատվիրատուին կներկայացնի կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«ՀՀ նախագծերի պետական
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	արտագերատեսխական փորձաքննություն» ՓԲԸ
ՀԿՀՀ 02647057	ք. Երևան, Կոմիտաս 54բ
Հ/Հ 900013202016	ՀԿՀՀ 01508665
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Հ/Հ 2473700277210010
գործառնական վարչություն	«ԱՇԲ» ՓԲԸ Երևան 4/6
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
Է. Գևորգյան _____	Գ. Արշակյան _____

Հավելված
Հաստատված է
«02» հոկտեմբերի 2018թ. կնքված
N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/011 գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում		
		Նոյեմբեր	Մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը	**Ընդամենը Տարի**
ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն	5113	816 000	816 000	**816 000**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ նախագծերի պետական
արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտաս 54բ
ՀՎՀՀ 01508665
Հ/Հ 2473700277210010
«ԱՇԲ» ՓԲԸ Նաիրի մ/ճ
Տնօրեն

Գ. Արշակյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/